

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՅՐԴԱԲԱՆՆԵՐԻ ՀԱԶՈՂՈՒԹՈՒՆԸ

“ԳԵՈՏԱՐ-ՄԵԴԻԱ” մոսկովյան հրատարակչության կողմից լույս է ընծայվել հայտնի հայ գիտնական, Հայաստանի Առողջապահության Ազգային ինստիտուտի անգիոներոլոգիայի ամբիոնի վարիչ, “Նաիրի” բժշկական կենտրոնի ներոլոգիայի կլինիկայի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրի Հովսեփի Բակունցի “ Ուղեղային կաթվածի էնդոգեն գործոնները” մենագրությունը /Մոսկվա, 2011թ. 357 էջ/: Տվյալ մենագրության հրատարակումը հրաշալի իրադարձություն է Հայաստանի նյարդաբանների և հանրապետության ողջ բժշկական հասարակության կյանքում: Նախևառաջ, անհրաժեշտ է ընդգծել, որ հայ բժիշկների կողմից նմանատիպ լուրջ մենագրությունների տպագրումը Մոսկվայում, ցավոք, այնքան էլ հաճախակի երևույթ չէ: Դրա համար գրախոսվող մենագրությունը պետք է դրական ընկալվի միջազգային մակարդակում հայկական գիտության ներկայանալի գործառույթների ասպարեզում:

Պակաս կարևոր չէ այն, որ մենագրությունը նվիրված է առավել ահեղ հիվանդություններից մեկին՝ ինսուլտին, նրա զարգացման ներքին մեխանիզմներին, դրանց հետազոտման և բուժական կարգավորման մեթոդներին: Իր վրա վերցնելով նման բարդ առաքելություն, հսկայական պատասխանատվություն՝ համաշխարհային բժշկական հանրությանը ներկայացնել Հայաստանում կուտակված ինսուլտի ուսումնասիրության, կանխարգելման և բուժման փորձը, ներկայացնել այս ախտաբանության ուսումնասիրության նոր ասպարեզները, և ամենակարևորը, բավականին էական գործնական արդյունքները, դրանով մենագրության հեղինակը Հայաստանում նյարդաբանության արդիականության և իրական գիտական նշանակության արժանի վկայությունն է բերում:

Չի կարելի չնշել բազմանշանակալից այն փաստը, որ մենագրության նախաբանը /5-6 էջ/ ընթերցողին ներկայացնում է ՌԴ Առողջապահության փոխնախարար, Ինսուլտի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, Ռուսաստանի Պետական բժշկական համալսարանի ֆունդամենտալ և կլինիկական նյարդաբանության և նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ, Ինսուլտի հետ պայքարի Ազգային

ասոցիացիայի փոխնախագահ, ՌԲԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Վ. Ի. Սկվորցովան: Ուզում եմ մեջբերել տվյալ նախաբանից, ըստ իս, գրախոսվող մենագրության առավելությունները բավականին խորհրդանշականորեն բնութագրող մի հատված. “Իր հետազոտությունների զգալի մասը պրոֆեսոր Հ. Հ. Բակունցը անց է կացրել Ռուսաստանի Պետական բժշկական համալսարանի պատերի ներքո: Ներկայացված մենագրության մեջ ընդհանրեցվում են հենց հեղինակի հետազոտությունների արդյունքները և զուգորդվում են համաշխարհային գրականության տվյալների հետ: Նրա առանձին գլուխները նվիրված են գլխուղեղի անոթային վնասման ձևավորման մեխանիզմների հեղինակային ներկայացմանը և օրիգինալ ասպարեզներին, ինչ անկասկած, մեծ ուշադրության է արժանի: Հեղինակի կլինիկո-լաբորատոր հետազոտություններին զուգահեռ հատկապես ուզում եմ նշել նրա կողմից դեկավարվող անգիոներոլոգիայի կենտրոնի իրական կլինիկական ձեռքբերումները և Հայաստանում հակաինսուլտային ծառայության խոստումնալի զարգացումը”: Արժանանալով համաշխարհային միության ինսուլտի հետ պայքարի առաջատար մասնագետներից մեկի նման բարձր գանահատականի, մենագրությունը լիիրավ կարող է մտնել ինսուլտի մասին ժամանակակից գիտության զարգացումը կանխորոշող գիտական աշխատությունների ցանկի մեջ:

Չեմ կարող լռությամբ շրջանցել ևս մեկ կարևոր փաստ. մենագրությունը նվիրված է “...նշանավոր նյարդաբանի, Գիտնականի, Ուսուցչի՝ ՌԲԳԱ ակադեմիկոս Լևոն Հովհաննեսի Բադալյանի պայծառ հիշատակին”: Արդարացի էին նշում հին փիլիսոփաները. “Կաթիլի մեջ արտացոլվում է արևվը...” Չի կարելի չտեսնել և չողջունել նշանավոր, լայն մտածող կլինիցիստի, ֆենոմենալ անձնավորության՝ Լևոն Բադալյանի անվիճելի ազդեցությունը տվյալ մենագրության իդեոլոգիայի, ծնունդի, շարադրման վրա:

Հարկ է նշել, որ մենագրությունը գրավում է ներթափանցման փորձով, կամ, ավելի շուտ, ժամանակակից գիտական մտքի առաջընթացով դեպի ինսուլտի ձևավորման և զարգացման բարդ լաբիրինթոս, սկսած այսպես կոչված “ախտաբանության կետային կուտակման” պրոցեսներից, ախտաբանական պրոցեսի զարգացման ընդհանուր օրինաչափությունների հայտնաբերումից և վերջացրած կլինիկական դրսևորումների

արտահայտմամբ: Ուղեղային կաթվածի ժամանակ իմունային խանգարումների նկարագրությունը, այս ախտաբանության ժամանակ օրգանիզմի հոմեոստազի խանգարման գնահատման նոր սկզբունքների շարադրումը, օրգանիզմի տարբեր համակարգերի խանգարումների մեխանիզմներում բջջային ընկալունակության դերի հայտնաբերումը, ներգատական խանգարումների դերի վերլուծությունը, ինսուլտի ժամանակ զարգացող բարդ ախտաֆիզիոլոգիական պրոցեսների ընթացքում նյարդախմունաներգատական ցանցի ինտեգրացված դերի և նշանակության մասին տվյալները, բոլոր այս, անկասկած, արժեքավոր նյութերը, եզրույթներն ու սկզբունքները առաջին անգամ են ներկայացված ժամանակակից նյարդաբանական գրականության մեջ և, չկա կասկած, կգրավեն բազմաթիվ նյարդաբանների համառ ուշադրությունը:

Մենագրության անվիճելի առավելությունն է հանդիսանում ընթերցողին ինսուլտի խնդրի ժամանակակից վիճակի հետ մանրամասն ցանոթացումը, մեջբերված են առավել նշանակալից հրապարակումներ, ձեռքբերումներ ոչ միայն կլինիկական նյարդաբանության, այլև նյարդախմանաբանության, նյարդաներգատաբանության, նյարդաքիմիայի, այդ թվում նաև մեր հայրենակիցների աշխատանքների, և մասնավորապես, ակադեմիկոս Ա. Ա. Գալոյանի ղեկավարությամբ անցկացված բազմամյա և բազմապլանային հետազոտությունների արդյունքները, որոնք հնարավորություն տվեցին նրան առաջ քաշել նյարդաներգատական իմունաբանության կոնցեպտը, որը լայն արձագանք է ստացել գիտական աշխարհում: Մենագրությունում մեջբերված ակադեմիկոս Ա. Ա. Գալոյանի որոշ տեսական և գործնական աշխատանքների արդյունքները, ըստ մենագրության հեղինակի, լայն դաշտ են համատեղ կլինիկո-լաբորատոր հետազոտությունների խորացման և ժամանակակից բժշկության տեսության և կիրառելիության զարգացման հսկայական ներուժի համար:

Պակաս արժեքավոր չէ մենագրությունում այն փաստը, որ մենագրությունում բերված գրականության տվյալների և ուսումնասիրվող էնդոգեն գործոնների բազմագործոնային կլինիկական ու լաբորատոր վերլուծության ընդհանրեցման արդյունքները հեղինակի համար հիմք հանդիսացան ուղեղային արյան շրջանառության խանգարումների տարբեր ասպարեզների քիչ հայտնի կողմերի օրիգինալ մեկնության

ներկայացման համար, որն, անկասկած, ըստ արժանվույնս կգնահատվի նյարդաբանական գիտության մեջ:

Հատուկ ուշադրություն է գրավում “Հայաստանում ինսուլտի խնդրի լուծման ուղիները” գլուխը: Այս գլխում կենտրոնացված է Հայաստանի նյարդաբանների, և, բնականաբար, հեղինակի հսկայական փորձը ինսուլտի տարբեր ձևերի և դրսևորումների հետազոտման և բուժման, հակաինսուլտային ծառայության կազմակերպման մեջ: Կարևոր է ինսուլտով հիվանդներին օգնության ցուցաբերման ձևավորված սկզբունքների վերանայման և մոդիֆիկացման նպատակահարմարության մասին հեղինակի պնդումը և “STROKE” միասնական ծրագրի նրա ներկայացումը, ինչը անտարակույս, հնարավորություն կտա ունիֆիկացնել նման ահեղ պաթոլոգիայի ախտորոշման, բուժման և կանխարգելման միջոցները:

Որպես վերջաբան ուզում եմ ընդգծել, որ պրոֆեսոր Հ. Հ. Բակունցի “Ուղեղային կաթվածի ենդոգեն գործոնները” մենագրության լույս ընծայումը հրաշալի ձեռքբերում է ժամանակակից նյարդաբանության, ինսուլտի մասին գիտության, և, մասնավորապես, Հայաստանի բժշկության և առողջապահության զարգացման համար:

ՀՀ Բժշկական Գիտությունների Ակադեմիայի նախագահ  
Ռուսական Բժշկական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պրոֆեսոր Լ. Ն. Մկրտչյան

Նոր Ժամանակ №2024, 4 հունիս, 2011, էջ. 6